

ՀՀ ԱՆ «Վ.Ա.ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ



ԱՆԿԱՆ ԱՌԻՒՄՑՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ «Վ.Ա.ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆԿԱՆ ՈՒՌՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի Ղեկավարությանը

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է ՀՀ ԱՆ «Վ.Ա.ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆԿԱՆ ՈՒՌՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են ընկերության՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀՈՒՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել քավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅՆ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ընկերության 31.12.2020թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որը 28.06.2021թ. արտահայտել է չձևափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱՋՑ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱԵՎՆՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ. հասցե՝ audit.servicelc@gmail.com, վեբկայք՝ www.pkfarmeria.com

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՌԻՒՄՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻՒՄՑԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ

գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Շնկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. ԵՐԱՆՆ - 22.06.2022թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն՝

Որակավորված աուդիտոր

Որակավորված աուդիտոր՝



Գրու Դավթյան

Արփինե Խաչատրյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	2
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	3
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	4
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6

Չափման միավորը՝ հազար դրամ	Ծան.	2021թ.	2020թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	9,547,878	6,199,759
Կառուցման ընթացքում գտնվող շինություն	14	225,552	9,565
Ոչ նյութական ակտիվներ	15	9,480	358
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		9,782,910	6,209,682
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	16	338,970	323,016
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	183,488	150,008
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	120,056	5,260
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		642,514	478,284
Ընդամենը ակտիվներ		10,425,424	6,687,966
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	19		
Համալրված բաժնետիրական կապիտալ		607,370	607,370
Էմիսիոն եկամուտ		17,876	17,876
Զբաղիված շահույթ (չձանկված վնաս)		2,184,785	2,116,686
Պահուստային կապիտալ		16,420	16,420
Վերագնահատման պահուստ		3,219,964	
Սեփական կապիտալի այլ տարրեր		70,809	70,809
Ընդամենը սեփական կապիտալ		6,117,224	2,829,161
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	224,917	150,806
Հետաձգված հարկային պարտավորություններ	21	396,670	445,688
Ակտիվներին վերաբերող շնորհներ	22	1,078,500	1,181,386
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,700,087	1,777,880
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	228,704	220,324
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	801,882	568,445
Եկամուտներին վերաբերող շնորհներ	22	184,005	147,129
Ընթացիկ պահուստներ	24	1,393,522	1,145,027
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		2,608,113	2,080,925
Ընդամենը պարտավորություններ		4,308,200	3,858,805
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավ.		10,425,424	6,687,966

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանադջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝

Ն. Մանուկյան

Գլխ. Հաշվապահ՝

Հ. Հանեսյան

Չափման միավորը՝ հազար դրամ	Ծան.	2021թ.	2020թ.
Հասույթ	5	4,878,305	3,591,277
Վաճառքի ինքնարժեք	6	(4,253,023)	(3,377,628)
Համախառն շահույթ		625,282	213,599
Այլ եկամուտ	7	990,250	480,389
Վարչական ծախսեր	8	(541,744)	(396,910)
Իրացման ծախսեր		-	(1,136)
Այլ ծախսեր	9	(885,876)	(442,299)
Ֆինանսական ծախսեր	10	(18,229)	(22,303)
Այլ օգուտ (կորուստ)	11	4,646	(5,616)
Գործառնական գործունեության արդյունքները		174,329	(174,276)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		174,329	(174,276)
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	12	(27,657)	(34,741)
Տարվա շահույթ/(վնաս)		146,672	(139,535)

ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարձյանի անվան ուղուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն՝

Ն. Մանուկյան

Գլխ. Հաշվապահ՝

Հ. Հանեսյան

Մեծապատկերով փոփոխությունները մասնաշաղկապում ներկայացված են:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հաշվարկված չափաբաժիններ

Մասնաշաղկապի անվանումը	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատման պահուստ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մասնաշաղկապի առ 01 հունվար 2020թ.						
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	607,370	17,876	-	51,039	2,292,411 (139,535)	2,968,696 (139,535)
Հայտարարված չափաբաժիններ				36,190	(36,190)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	607,370	17,876	-	87,229	2,116,686	2,829,161
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	607,370	17,876	-	87,229	2,116,686	2,829,161
Հայտարարված չափաբաժիններ					146,672	146,672
Հիմնական միջոցների վերագնահատումներից արժեքի աճ (նվազում)			3,219,964		(78,573)	(78,573)
Մասնաշաղկապի առ 31 դեկտեմբերի 2021թ.						
	607,370	17,876	3,219,964	87,229	2,184,785	6,117,224



ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուղղորդարարության ազգային կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն

Գլխ. Հաշվապահ

ՀՀ ԱՆ «Վ.Ա.ՖԱՆԱՐՋԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ԴԻՄՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱԵԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԶԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

Հոդվածի անվանում	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ծառայությունների իրացումից	4,897,019	3,654,028
Այլ գործունեությունից մուտքեր	155,723	76,585
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	5,052,742	3,730,613
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	(1,210,410)	(796,184)
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման գծով	(80,714)	(9,834)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,423,794)	(2,105,981)
Վճարումներ բյուջե, բացառությամբ շահութահարկի	(821,726)	(679,137)
Այլ գործունեությունից ելքեր	(21,855)	(24,884)
Վճարումներ բյուջե	(38,491)	(34,117)
Ընդամենը Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	(4,596,990)	(3,650,137)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	455,752	80,476
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(422,349)	(282,080)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(422,349)	(282,080)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից մուտքեր	199,991	395,322
Վարկերի մարումից ելքեր	(77,442)	(226,326)
Վճարված շահաբաժիններ		(87,383)
Վճարված տոկոսներ	(40,831)	(10,284)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	81,718	71,329
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	115,121	(130,275)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ I հունվարի	5,260	135,449
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(325)	86
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	120,056	5,260

ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարջանի անվան ուղուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝

Գլխ. Հաշվապահ՝



1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վ.Ա.Ֆանարջանի անվան ուսուցչաբնության ազգային կենտրոն ՓԲԸ (աստիճան Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 30.10.2003թ. «Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմիլացման շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու մասին» թիվ 1413-Ն որոշման (ՀՀ կառավարության 2003թ. -ի հոկտեմբերի 30-ի դեկտեմբերի 11-ի թիվ 1634-Ն 2004թ. -ի հունվարի 22 -ի թիվ 30-Ն և 2004թ. փետրվարի 19-ի թիվ 244Ն որոշումների խմբագրությամբ) համաձայն ՀՀ ԱՆ «Վ. Բազիկյանի անվան հակաուսուցչային դիսպանսեր» ՓԲԸ (գրանցված է ՀՀ ծեղարկությունների պետական ռեգիստրի կողմից 08.01.1996թ. վերակազմավորման գրանցման օրը՝ 31.03.1998թ. գրանցման թիվ 286.140.01871, վկայական՝ 01U021580, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Հանրապետության փողոց թիվ 85) և ՀՀ ԱՆ «Վ.Ա.ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՈՒԹՅԱՆ ՈՒՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ (գրանցված է ՀՀ ծեղարկությունների պետական ռեգիստրի կողմից 15.01.1996թ. վերակազմավորման գրանցման օրը՝ 30.06.1998թ. գրանցման թիվ 282.140.01670, վկայական՝ 01U021752):

Ընկերության գործունեության հիմնական տեսակը առողջապահական գործունեությունն է, քուժօգնությունն ու սպասարկում, որը իրականացվում է համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից անժամկետ տրամադրված Կ- XX - 000973 լիցենզիան, ինչպես նաև Ատոմային էներգիայի օգտագործման քննազավաղ կարգավորող մարմնի ՀՀ ԿԱ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից ՌՃԱՕ-351-2011 Ռադիոակտիվ նյութերի օգտագործման (երկարաձգված մինչև 31.01.2031թ.), ՌՃԱՕ -084-2007 Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման (երկարաձգված մինչև 18.04.2027թ.), ՌՃԱՕ -085-2007 Ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի օգտագործման (երկարաձգված մինչև 18.04.2027թ) ՌՃԱՆ-004-2005 Ռադիոակտիվ նյութերի արտահանում (երկարաձգված մինչև 19.08.2025թ) լիցենզիանները:

Ընկերության ֆիրմային անվանումն է՝ ՀՀ ԱՆ Վ.Ա.ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՈՒԹՅԱՆ ՈՒՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ :

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է. ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ, Վ.Ա. Ֆանարջանի փող. թիվ 76: :

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանն ունեցել է 532 աշխատակից, իսկ 2020թ. -ին աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 507 մարդ

1.2 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

• ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց քնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների հստիքի (ՀՀՄՍՀ) կողմից մշակված և հրապարակված ֆինանսական հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և ֆինանսական հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, քաջառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է հաշվեգրման հիմունքով, քաջառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Անընդհատություն

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս դատողությունն անելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների եկամտաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերության գործունեության անընդհատության վրա ազդող նշանակալի գործոն է հանդիսանում համաշխարհային առողջապահության արտակարգ իրավիճակը Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսային նոր շտամի պատճառով («COVID-19-ի բռնկում») և ռիսկերը միջազգային հանրության համար, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաճարակ (պանդեմիա)՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

Ղեկավարության գնահատմամբ COVID19-ի տարածման և կառավարության համապատասխան քաղաքականությունների քաջասական հետևանքները էականորեն չեն ազդի առաջիկայում Ընկերության գործունեության վրա:

Ղեկավարությունը չի ակնկալում, որ իրավիճակը կարող է առաջացնել իր գործունեության անընդհատության անհամապատասխանություն՝ հաշվի առնելով գործառնական դրամական հոսքերի շարունակականության ակնկալիքը:

Ընկերության ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Ընկերությունը տեսանելի ապագայում կարող է ապահովել իր գործունեության անընդհատությունը: Հետևաբար իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը շարունակում է հիմնվել անընդհատության սկզբունքի վրա, այդ իսկ պատճառով սույն ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում որևէ ճշգրտումներ, որոնց անհրաժեշտությունն ի հայտ կգար այն դեպքում, եթե Ընկերությունը ի վիճակի չլիներ ապահովել իր գործունեության շարունակականությունը:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների,

պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընկերությունը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի կիրառել որևէ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ:

Փոփոխությունների էությունը և ազդեցությունները նկարագրված են ստորև.

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառվել են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ. , որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը (ՖՀՄՍ 3 փոփոխություններ),
- Էականության սահմանումը (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ),
- Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ քլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»
- Մուրքեր նախքան նախարեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
- Ծանր պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):
- «Պարզավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

4.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքի մոդել

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումներ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում դրանց տեղի ունենալու ժամանակ:

Մաշվածություն

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում քաջառությամբ, եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արդյունքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
Շենքեր	20
Արտադրատնտեսական գույք	5
Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմոտ կառավարման այլ տեխնիկա	1
Այլ հիմնական միջոցներ	8

4.2 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահանջվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ քաջառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, քաջառությամբ հեջավորման գործիքների, դասակարգվում են՝

- Փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեքը կմնա գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, քաջառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեքը կմնա, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեքը կմնա պահուստը:

Ֆինանսական պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձատու

Ակտիվների վարձակալությունը, որոնց սեփականության հետ կապված ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի կողմից, դասակարգվում է որպես գործառնական: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները եկամուտ են ճանաչվում գծային մեթոդով վարձակալության ժամանակահատվածի ընթացքում և ներառվում են այլ եկամուտներում:

4.3 Կանոնադրական կապիտալ

2021թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կազմել է 607.370,000 (վեց հարյուր յոթ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) դրամ՝ 5000 դրամ անվանական արժեքով 121.474 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս: Կանոնադրական կապիտալը ամբողջությամբ տեղաբաշխված է և պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

4.4 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

Ընկերությունը շահույթի հաշվին պետք է ստեղծի պահուստային կապիտալ, որը կարգավորված է Ընկերության կանոնադրությամբ: Այն օգտագործվելու է վնասների ծածկման, ծախսաթիւնների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակներով:

4.5 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

Ստորև ներկայացվում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքը.

Արտարժույթի տեսակ	ՀՀ ԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքը 31.12.2021թ-ի դրությամբ	ՀՀ ԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքը 31.12.2020թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	480.14 ՀՀ դրամ	522.59 ՀՀ դրամ
1 ԵՎՐՈ	542.61 ՀՀ դրամ	641.11 ՀՀ դրամ
1 Ռուս. Ռուբլի	6.42 ՀՀ դրամ	7.02 ՀՀ դրամ

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես այլ ոչ գործառնական եկամուտ կամ ծախս:

4.6 Ընորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհների հիմնական պայմանն այն է, որ դրանց ստացման իրավունք ունեցող կազմակերպությունը պետք է գնի, կառուցի կամ որևէ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ:

Եկամուտներին վերաբերող շնորհները ակտիվներին վերաբերող շնորհներից տարբերվող շնորհներ են:

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում պարբերաբար այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Որոշակի ծախսերի համար տրված շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են այդ համապատասխան ծախսերը: Նմանապես, մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները սովորաբար ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը: Ընդհանուր, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես նվազեցում ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս: Այսինքն շնորհը նվազեցվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս և արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

4.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են թուրք հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված թուրք ժամանակաշրջանների նկատմամբ:

5. Հասոխո

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Պետ. պատվերի շրջանակներում իրականացված ծառայությունից հասույթ	2,782,884	1,347,477
Վճարովի ծառայություններից հասույթ	2,092,909	2,240,965
Այլ ծառայությունից եկամուտ	2,512	2,835
Ընդամենը	4,878,305	3,591,277

6. ՎԱՅՏԱՌՔԻ ԻՆՔՆԱՐՔԵՔ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ուղղակի նյութական ծախսումներ	(497,858)	(629,624)
Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	(2,976,534)	(2,297,104)
Մաշվածություն և ամորտիզացիա	(322,349)	(412,097)
Կոմունալ ծախսեր, էլեկտրաէներգիա	(157,414)	(36,205)
Այլ ծախսեր	(298,868)	(2,648)
Ընդամենը	(4,253,023)	(3,377,678)

7. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Վարձակալության գծով եկամուտ	56,257	31,828
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	1,286	236
Եկամուտներ շնորհներից	932,547	385,657
Այլ եկամուտներ	160	62,668
Ընդամենը	990,250	480,389

8. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ	(437,144)	(360,235)
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային ծախսեր	(2,497)	(2,098)
Փոստի և հեռախոսակապության գծով ծախսեր	(1,200)	(520)
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	(9,585)	(356)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(2,800)	-
Մաշվածություն	(26,266)	(13,131)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(15,433)	(11,715)
Բանկային ծառայությունների և ապահովագրության վճարներ	(40,828)	(7,118)
Այլ	(5,991)	(1,737)
Ընդամենը	(541,744)	(396,910)

9. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	(24,422)	(142)
Ծախսեր տույժերից և տուգանքներից	(8,375)	(5,516)
Ընդհի ստացված ակտիվների մաշվածություն	(843,316)	(385,657)
Դուրս գրված և ոչնչացված դեղորայք	-	(39,523)
Այլ ծախսեր	(9,763)	(11,461)
Ընդամենը	(885,876)	(442,299)

10. ֆինանսական ցուցանիշներ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ֆինանսական ծախսեր	18,229	22,303
Ընդամենը	18,229	22,303

11. ԱՅԼ ՕԳՈՒՑ/ԿՈՐՈՒՄՏ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Փոխարժեքային տարբերություններից օգուտ	5,999	1,652
Վնաս փոխարժեքային տարբերություններից	(1,353)	(7,268)
Ընդամենը	4,646	(5,616)

12. ԸԱՀՈՒԹՎԱԿԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ/ՕԳՈՒՑ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	76,675	2,719)
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում	(49,018)	(37,460)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս/օգուտ	27,657	(34,741)

13. ՀԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Սկզբնական արժեք	Ընկերության շինություններ	Հողամաս	Մեքենա սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, որ տեսական գույք	Օգտագործված ուժի մասին հ/մ	Ֆինանսական վարձակալության բացառված հ/մ	Ընդամենը
2019թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,227,813	571,600	3,072,609	14,200	156,582	16,070	61,679	8,120,553
2020թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	4,227,813	571,600	3,072,609	14,200	156,582	16,070	61,679	8,120,553
Ավելացումներ, ներդրված չարժ	227,454	-	868,195	259	139,277	24,519	-	1,259,704
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	(688,149)	-	(30,135)	-	-	(718,284)
2020թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,455,267	571,600	3,252,655	14,459	265,724	40,589	61,679	8,661,973
2021թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	4,455,267	571,600	3,252,655	14,459	265,724	40,589	61,679	8,661,973
Ավելացումներ, ներդրված չարժ	154,999	-	502,788	-	154,658	540,465	-	1,352,910
Օտարումներ, դուրս գրումներ	(107,520)	-	(146,505)	-	(7,120)	(507,963)	-	(769,108)
Վերազնադատումներ	116,797	2,127,916	(1,670,390)	(7,737)	(123,748)	(404)	(43,622)	398,812
2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,619,543	2,699,516	1,938,548	6,722	289,514	72,687	18,057	9,644,587
Կուտակված մաշվածություն	536,521	-	2,001,327	10,359	104,796	-	24,556	2,677,559
Տարվա մաշվածությունը	62,311	-	312,421	1,469	42,248	-	6,492	474,941
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	(626,600)	-	(13,686)	-	-	(640,286)
2020թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	598,832	-	1,687,148	11,828	133,358	-	31,048	2,462,214
2021թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	598,832	-	1,687,148	11,828	133,358	-	31,048	2,462,214
Տարվա ծախս, ներդրված չարժ	77,278	-	425,429	1,596	81,193	-	6,492	591,938
Վերազնադատումներ	(676,060)	-	(2,022,886)	(13,302)	(207,655)	-	(37,540)	(2,957,431)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	89,691	122	6,896	-	-	96,709
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զուտ հաշվեցույցային արժեք	3,856,435	571,600	1,565,507	2,631	132,366	40,589	30,631	6,199,759
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զուտ հաշվեցույցային արժեք	4,619,543	2,699,516	1,848,857	6,600	282,618	72,687	18,057	9,547,878

14. ԿԱՌԱՌԱՅՄԱՆ ԸՆԹԱՑՁՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԻՆՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Կառուցման ընթացքում գտնվող շինություն	225,552	9,565
Ընդամենը	225,552	9,565

15. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	Համակարգչային ծրագիր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2019թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,765	1,765
2020թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	1,765	1,765
Ավելացումներ	18	18
Նվազեցում	(176)	(176)
2020թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,607	1,607
2021թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	1,607	1,607
Ավելացումներ	11,480	11,480
Նվազեցում	(717)	(717)
2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,370	12,370
Կուտակված մաշվածություն		
2020թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	1,117	1,117
Տարվա ծախս	288	288
Նվազեցումներ	(156)	(156)
2020թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,249	1,249
2021թ. -ի հունվարի 1-ի դրությամբ	1,249	1,249
Տարվա ծախս	1,880	1,880
Նվազեցումներ	(239)	(239)
2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,890	2,890
Զուտ հաշվեկշռային արժեք		
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	358	358
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,480	9,480

16 ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Դեղորայք և բժշկական պարագաներ	251,012	209,500
Վառելի	831	211
Շինանյութ	43,794	70,044
Անավարտ ծառայությունների գծով ծախսեր	9,599	8,789
Այլ պաշարներ	33,734	34,472
Ընդամենը	338,970	323,016

17. ԱՌԱՏՐԱԾԻՆ և ԱՅԼ ԴԵՐԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տրված կանխավճարներ	19,247	9,727
Առևտրային դեբիտորական պարտքեր	154,775	107,008
Դեբիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	7,703	3,495
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեի գծով	680	28,003
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	1,083	1,775
Ընդամենը	183,488	150,008

18. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐՓԵՑՆԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Կանխիկը դրամարկղում	182	5,047
Բանկային հաշիվների մնացորդներ	119,874	213
Ընդամենը	120,056	5,260

19. ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՀՈՒՄՏՆԵՐ

(ա) ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

	Սովորական բաժնետոմսեր	
	2021թ.	2020թ.
Բաժնետիրական կապիտալ	607,370	607,370
Ընդամենը	607,370	607,370

Ընկերությունն ունի հասարակ բաժնետոմսերի մեկ դաս:

Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է, դրա բաժնեմասը՝ 100 % պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

(բ) ԵԱՀԱՐԱԺԻՆՆԵՐ

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս – մեկ ձայն սկզբունքով: Հաշվետու տարում շահաբաժին չի վճարվել:

(գ) ՊԱՇՏՈՒՍՆԵՐ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով:

Հաշվետու տարում Ընկերությունը պահուստային կապիտալին մասհանում չի կատարել: 31.12.2021թ-ի դրությամբ պահուստային կապիտալի մնացորդը կազմել է 16,420 հազ.դրամ:

(դ) ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՇՏՈՒՍ

Վերագնահատման պահուստը վերաբերում է հիմնական միջոցների վերագնահատմանը:

20.ՎԱՐԿԵՐ և ՓՈՆԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ոչ ընթացիկ		
Երկարաժամկետ բանկային վարկեր	224,917	150,806
Ընդամենը ոչ ընթացիկ վարկեր	224,917	150,806
Ընթացիկ		
Երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մաս	87,000	20,333
Վարկային գիծ	141,704	199,991
Ընդամենը երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	228,704	220,324
Ընդամենը	453,621	371,130

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԵՐ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎԱՍՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՌԱՎ Է ՀԵՏԱՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հազար դրամ	Արժույթը	Տեսակը	2021թ.	2020թ.
Վարկ տրամադրողի անվանումը				
Ամերիաբանկ ՓԲԸ	ՀՀ դրամ	Վարկային գիծ	141,704	199,991
Ամերիաբանկ ՓԲԸ	ՀՀ դրամ	Վարկ	311,917	171,139

21. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ. հետաձգված հարկի գծով կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%):

Հազար դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Հետաձգված շահութահարկ	250,188	205,459	646,858	651,147	396,670	445,688
Ընդամենը հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	250,188	205,459	646,858	651,147	396,670	445,688

21.1 ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸԱՐԺԸ

2020թ.

(հազար դրամ)

Հետաձգված հարկային ակտիվներ
Հիմնական միջոցներ
Զօգտագործված արձակուրդների գծով պահուստ
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ
Հետաձգված հարկային պարտավորություններ
Հիմնական միջոցներ
Ընդամենը հետաձգված հարկային
պարտավորություններ
**Զուտ հետաձգված հարկային
ակտիվներ/(պարտավորություններ)**

1 հունվարի
դրությամբ

Շահույթում կամ
վնասում
ճանաչված

31
դեկտեմբերի
դրությամբ

-	-	-
167,686	37,773	205,459
167,686	37,773	205,459
(650,834)	(313)	(651,147)
(650,834)	(313)	(651,147)
(483,148)	37,460	(445,688)

2021թ.

(հազար դրամ)

Հետաձգված հարկային ակտիվներ
Հիմնական միջոցներ
Զօգտագործված արձակուրդների գծով պահուստ
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ
Հետաձգված հարկային պարտավորություններ
Հիմնական միջոցներ
**Ընդամենը հետաձգված հարկային
պարտավորություններ**
**Զուտ հետաձգված հարկային
ակտիվներ/(պարտավորություններ)**

1 հունվարի
դրությամբ

Շահույթում կամ
վնասում
ճանաչված

31
դեկտեմբերի
դրությամբ

-	-	-
205,459	44,729	250,188
205,459	44,729	250,188
(651,147)	4,289	(646,858)
-	-	-
(445,688)	49,018	(396,670)

22. ԱՆՏՈՒՆԵՐԻՆ ՎԵՐԲԵՐՈՂ ԸՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ

Մնացորդը առ 01 հունվար

Ավելացումներ

Ճանաչված եկամուտ

Մնացորդը առ 31 դեկտեմբեր

31.12.2021թ.

31.12.2020թ.

1,181,386

962,856

135,273

423,150

(238,159)

(204,820)

1,078,500

1,181,386

22.1 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԲԵՐՈՂ ԸՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ

Մնացորդը առ 01 հունվար

Ավելացումներ

Ճանաչված եկամուտ

Մնացորդը առ 31 դեկտեմբեր

31.12.2021թ.

31.12.2020թ.

147,129

138,313

740,262

300,859

(703,386)

(292,043)

184,005

147,129

23. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵՒԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	445,164	380,107
Այլ կրեդիտորական պարտքեր	206	1,635
Ընդամենը	445,370	381,742
Ստացված կանխավճարներ	9,678	2,109
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	151,588	118,710
Սոց. ապ. վճարներ	5,785	4,959
Վճարվելիք հարկեր	110,888	60,925
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	78,573	
Ընդամենը	801,882	568,445

24. ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ընթացիկ պահուստներ չօգտագործված արձակուրդի գծով	1,393,522	1,145,027
Ընդամենը	1,393,522	1,145,027

25. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային քաջահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում բաժնետիրոջը իր գործունեության վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է քաջահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

(բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի փնում կատարել իր պայմանագրային պարտականությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը ցուցաբերում է առանձնահատուկ մոտեցում պայմանագրային յուրաքանչյուր կողմի նկատմամբ: Պարտքային ռիսկն

առաջանում է հիմնականում գործընկերներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերից ստացված փոխառությունների գծով:

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Վարկային գնահատումներն իրականացվում են որոշակի սահմանաչափը գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար՝ քաջատույամբ կապակցված կողմերի:

(գ) Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Վարկային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր գործընկերոջ առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև գործընկերների բազայի կառուցվածքը, ներառյալ տվյալով որտի հաճախորդի ու երկրի կողմից հանձն առնված պարտականության չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա:

Ընկերությունն ըստ անհրաժեշտության կձևավորի արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Ընկերության գնահատականը: Այս պահուստը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին, որոնք արժեզրկված են:

(դ) Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀԸՄ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Ընկերության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

(ե) Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում նրա միակ բաժնետերերը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ընկերության բաժնետոմսերը կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազոր անձի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից: 2021թ. և 2020թ.-ի պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը բացահատվել է 5-րդ ծանոթագրություններով՝ պետական պատվերով մատուցված բժշկական ծառայությունների հասույթ տողում:

Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ	42,350	22,359
Ընդամենը	42,350	22,359

(զ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն՝ քննադատել և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու: Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ թնական աղետները:

(է) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(ը) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ:

(թ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ընկերությունը հաշվետու տարում չունի ստացված վարկեր և փոխառություններ: Այնուամենայնիվ, փոխառություններ և վարկեր վերցնելիս ղեկավարությունը կկիրառի իքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող քաղաքականություն կհիմնվի իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելը:

26. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՅԵՐ

(ա) ԵՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

Ընկերությունը քավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

(բ) ՎԵՐԱՇԱԿՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն ամբողջությամբ վերահսկվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից:

(գ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրություն իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որորոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի քաղաքական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

• Հարկային պարտավորությունները Հայաստանում

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և քննդրվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Շնկերության համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

27. ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ ՀԵՏՈՒ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱՍ ԴԵՊՅԵՐ

Հաշվետու ամսաթվից հետո հարկային ստուգման արդյունքում կատարվել է հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկի ճշգրտում, որը հաշվառվի է առնվել վերոնշյալ ֆինանսական հաշվետվությունները կազմելիս:

ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն՝

Գլխ. Հաշվապահ՝

[Handwritten signature]

